

Ե Ր Կ Ո Ւ Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր

Պ Ի Ո Ս Է Ի Զ Ա Ց Ն Ա Ի Ո Ր Ի Ն Մ Ե Զ 1

Պիոս ԺԱ.ի ընտրութեան առթիւ համաշխարհային մամուլը երկարօրէն զբաղեցաւ նոր Քահաւայապետին ընտրութիւնն ու տեղի ունեցած հանդէսները ժողովուրդներուն հաղորդելու մրցանքով, նա մանաւանդ Թագադրութեան աննման արարողութիւնը՝ հանդերձ Քահանայապետական Զայնաւորով:

Սոյն հանդէսին մէջ ամէնէն հետաքրքրաշարժը, որուն այնքան անսովոր զարմանքով և ամենամեծ շահագրգռութեամբ կը հետևի եւրոպացին՝ յոյն ծէսին ստանձնած պաշտօնական բաժինն է՝ Քահանայապետական Զայնաւորին մէջ: Վաղեմի սովորութիւն մ'է այդ, որ Հռովմայ Քահանայապետին Զայնաւորին միշտ կը մասնակցին երկու յոյն սարկաւազներ՝ իրենց արևելեան ծիսական տարազներով, Առաքելական Թղթոց և Աւետարանի լատին ընթերցումէն վերջ՝ նայները յունարէն լեզուով ևս կարդալու համար:

Այս հակիրճ ծանօթութենէն վերջ կ'արժէ մէջ բերել հոս հետաքրքրական դէպք մը, հանելով զայն մայրավանքիս անտիպ ժամանակագրութենէն, զոր գրած է մեծանուն Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան:

Պիոս Է.ի ընտրութիւնը, ինչպէս ծանօթ է, կատարուած է ի վենետիկ՝ Ս. Գէորգ կղզւոյ Բենեդիկտեանց մենաստանին մէջ: Թագադրութեան օրը Պապական Զայնաւորին պաշտօնապէս զործնական բաժին կ'ունենան երկու Մխիթարեան Հայրեր՝ Հ. Ստեփան Ասլիկեան և մեր իսկ ժամանակագիրը Հ. Մկրտիչ Աւգերեան, կարդալով յունարէն ընթերցումն ու Աւետարանը:

Մեր ընթերցողաց կը ներկայացնենք սոյն անմոռանալի անցքը՝ իր յարակից մանրամասնութիւններով, որ ստուգիւ հետաքրքրական են:

Պապընտի ժողովը գումարուած է 1799 դեկտեմբերի 1-ին, որ կը տեւէ մինչև 1800 Մարտ 13, և կը հրատարակուի յաջորդ օրը՝ ուրբաթ՝ «նկնամբ ամենայն զանգակաց քաղաքիս» փոքր մի յառաջ քան զօր հասարակ րեդմաւր րեդանօրից»: Նոյն գիշեր կը կատարուի մենաստանին մէջ շքեղ լուսավառութիւն, և «յետ այսորիկ այլևս առուար երկու եղև յուսագարդոյրիւնք գիշերի մի քան գւի փառաւոր»: Երեք օր եկեղեցիներու մէջ կ'երգուին Զքեղ Աստուած զոհաբանական երգը: Ս. Ղազարու մէջն ալ նոյնպէս երեք օր (մարտ 16, 17, 18)՝ ճաշու ժամերգութենէն վերջ: Այդպիսի հազուադէպ հոյակապ հանդիսի պարագաներուն, ինչպէս կ'ենթադրուի, ամէն ոք հետամուտ կ'ըլլայ վայրկեան մ'առաջ ձեռք ձգել մուտքի տոմսակ մը. անով միայն կարելի է կարգաւորութիւնը պահպանուիլ: Մեր Հայրերն ալ բնականաբար նոյն փափագով կը վառուին, և անկարծելի պարագայ մը, (այսինքն վերոյիշեալ մեր երկու Հայրերուն՝ Պիոս Է.ի ձայնաւորին մէջ մատուցած յոյն կիստարակաւագի և սարկաւագի դերակատարութեամբ մասնակցութիւնը), ստուգիւ բարեբախտ կ'ընէ զիրենք հազարաւորներէ աւելի: Թէ ինչպէս առիթը կը ներկայանայ, այսպէս կը պատմէ մեր ժամանակագիրը.

«Քանզի ի խորհի խարտաւիլակաց պատին (որ կուին մայէսզո տի շերէմնիա) ընդ Պրանգատօրոյի սեւքրիթարի Ս. Ժողովոյն, թէ ուստի՞ դոցեն յունարէն կարգացողս ի պատարագի պապին զընթերցում և զաւետարան՝ ըստ սովորութեան Հռովմայ դահին, երբ ի վենետիկ չկայ ասան հոռեական հոռոմ, երկուս խորհին ի ժամուն հարս. այսինքն կամ դիմել առ հայագի միանձնուն վանից Սրբոյն Ղազարու, որոց թիրեա ծէսք և սպասք իցեն յունակերպ՝ հանդերձ լեզուագիտութեամբ, և կամ դոտանել զլատինազգիս յունակարգացս անօրին մամբ պապին. ըստ որոյ և նունցն տեղոյս առաջարկէ զիւր փոքրաւորս իբրև գիտակ յունական ընթերցման: Բայց Պրանգատօրոն յառաջին խորհուրդն միտէ, լսելով զմէն՝ ինչ ինչ և յապաթէ Մարինովիքէ. և որ մեծն է, ինքն իսկ պապն ասացեալ է, թէ թէպէտե ի պահանջել հարկի տնօրինեմ և լատինազգույ, բայց բարուք լինէր դոտանել զարևելիս»: